ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«17» 11 2025 թ. Թիվ 261-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի ԹԻՎ 79-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2015 թվականի հունիսի 10-ի թիվ 55-Լ հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրության 10-րդ կետի 16-րդ ենթակետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2015 թվականի օգոստոսի 12-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մեդալները և կրծքանշանները սահմանելու, դրանց շնորհման կարգերը, նկարագրերը և ձևերը հաստատելու մասին» թիվ 79-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հրամանի 1-ին կետի 7-րդ ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) հրամանի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ և 9-րդ ենթակետերով.

«8) «Իրավակարգի և օրինականության ամրապնդման համար» մեդալ.

9) «Խիզախության համար» մեդալ:».

3) հրամանի 2-րդ կետի 7-րդ ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

4) հրամանի 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ և 9-րդ ենթակետերով.

«8) «Իրավակարգի և օրինականության ամրապնդման համար» մեդալի շնորհման կարգը, նկարագիրը և ձևը՝ համաձայն հավելված 8-ի.

9) «Խիզախության համար» մեդալի շնորհման կարգը, նկարագիրը և ձևը՝ համաձայն հավելված 9-ի:».

5) հրամանը լրացնել 8-րդ և 9-րդ հավելվածներով՝ համաձայն հավելվածների:

2. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի խորհրդականներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ